27758

336 2
1-48

1927

15 JAN 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

336.2
ար Պ-48

ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇՄԱՏՈՒՐՔԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ

ԱՐԺԵՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՀԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ

ՊՍՏ. ԱԽՃԱՀ ՖԺԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍԱՄՍ ԼԻԿՅԱՆԻ
ՔԿՎԱՆ
Публичная Библиотека

ԹԻՖԼԻՍ—1927

27758

19 JUL 2013

ՏՊԱՐԱՆ ՊՈԼԻԳՐԱՖԴՊՐՈՑԻ
ԱԿԱԿԻ ԾԵՐԵԹԵԼԻ ՓՈՂ. № 3.
ԳԼԱՎԼԻՏ 1978. ՏԻՐԱԺ 1000.

Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ
ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՎՈՐՈՇՈՒՄԸ

Պետական Դրոշմատուրքի Կանոնադրությունը յեվ արժեքների շրջանառությունից գանձվող հարկի կանոնագիրքը գործադրության դնելու մասին

Խ. Ս. Հ. Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշումեն.

1. Սույն թվին հաստատված՝ Պետական Դրոշմատուրքի Կանոնադրությունը և արժեքների շրջանառությունից գանձվող հարկի կանոնագիրքը գործադրության մեջ մտցնել 1927 թվի հոկտեմբերի 1-ից, բացի հետևյալ կանոնադրության 37-րդ հոդվածից, վորը գործադրության մեջ է մտնում Խ. Ս. Հ. Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի սահմանած ժամկետին, սակայն վոչ վաղ, քան 1928 թվի հունվարի 1-ը։

2. Այն փաստաթղթերը, վորոնք տրվել, ընդունվել և կազմվել են այն ժամանակ, յերբ գործադրության մեջ է յեղել 1923 թվի ոգոստոս 17-ի Պետական Դրոշմատուրքի Կանոնադրությունը («Խ. Ս. Հ. Միության Կ. Գ. Կ., Ժ. Կ. Խ. և ՍՏՈ-ի Վեստնիկ», 1923 թվի № 5, հոդված 114), յենթակա յեն դրոշմատուրքի վճարմանը վերոհիշյալ կանոնադրության կարգով և ի փոփոխումն, լրացումն ու զարգացումն դրա հրատարակված որենքների հիման վրա, ըստ վորում, անորոշ գումարով գործարքներին վերա-

բերյալ այն փաստաթղթերը, որոնք կազմվել են 1923 թվի ոգոստոս 17-ի Պետական Դրոշմատուրքի Կանոնադրությունը գործադրվելիս, յենթակա յեն համեմատական դրոշմատուրքի վճարմանը, համաձայն այդ կանոնադրության որենքների, այն դումարի համեմատությամբ միայն, որ ստացվել ե փաստաթղթերի իրագործումից հիշյալ կանոնադրության գործադրության ընթացքում։

3. Պետական դրոշմատուրքի կանոնների խախտման մասին յեղած այն գործերը, որոնց քննությունը վերջացած չի յեղել սույն թվին հաստատված պետական դրոշմատուրքի կանոնադրությունը գործադրության մեջ մտցնելուց առաջ, դրանց թվում նաև այն գործերը, որոնց վերաբերմամբ ֆինանսական որգանների կայացրած վորոշումները բողոքարկված են հարկատուների կողմից,—պետք ե քննվեն սույն թվին հաստատված կանոնադրության կանոններով, ըստ այսմ, դաշնակից հանրապետությունների ֆինանսների ժողովրդական կոմիսարիատներին իրավունք ե վերապահվում—նվազեցնել և վերացնել դրված տուգանքը, նայած գործի հանգամանքներին։

Սույն թվին հաստատված Պետական Դրոշմատուրքի Կանոնադրությունը գործադրության մեջ մտցնելուց հետո՝ յերբ բողոքարկվում են այն վորոշումները, որոնք կայացել են ներկա կանոնադրությունը մտցնելուց առաջ, կիրառվում ե սույն կանոնադրության մեջ ցույց տված կարգը։

4. Հարկային հանձնաժողովների մասին 1926 թվի հունվարի 8-ին սահմանված կանոնագրքի 1-ին հոդվածի առաջին աբզացը («Խ. Ս. Հ. Միության Որ. Ժող.» 1926 թվի № 2, հոդվ. 11) ձևակերպել հետևյալ խմբագրությամբ.

«Արհեստահարկի ու յեկամտահարկի և արժեքների շրջանառությունից գանձվող հարկերի համար սահմանվում են հետևյալ միացյալ հարկային հանձնաժողովները. գավառակային, գավառային (և դրանց համապատասխան), քաղաքային, հատուկ ու նահանգական (և դրանց համապատասխան) հանձնաժողովներ։ Նահանգական (և դրանց համապատասխան) հանձնաժողովներում քննվում են նաև դրոշմատուրքին վերաբերյալ գործերը»։

5. Հարկային հանձնաժողովների հիշյալ կանոնագրքի 2-րդ հոդվածը («Խ. Ս. Հ. Միության Որ. Ժող.» 1927 թ. № 40, հոդվ. 397) ձևակերպել հետևյալ խմբագրությամբ.

«2. Բոլոր ձեռնարկների ու անձերի, բացի 5-րդ հոդվածում հիշվածներից, հավասարաչ տուրքի, յեկամտային հարկի և արժեքների շրջանառությունից գանձվող հարկի չափը վորոշելու համար սահմանվում են, ֆինանսական տեսչի նախագահությամբ, գավառակային հարկային հանձնաժողովներ, վորոնց կազմի մեջ մտնում են՝ 2 ներկայացուցիչ տեղական գործադիր կոմիտեյի կողմից, մի ներկայացուցիչ ներքին առևտուրը կանոնավորող տեղական որգանի կողմից, 2 անդամ արհեստահարկ վճարողների կողմից և 2 անդամ յեկամտահարկ վճարողների կողմից։

Գործերի վճռելուն մասնակցում են միայն այն հարկը վճարողների 2 անդամները, վորին վերաբերում ե քննվող գործը»։

6. Հարկային հանձնաժողովների հիշյալ կանոնագրքի 5-րդ հոդվածը («Խ. Ս. Հ. Միության Որ. Ժող.» 1927 թ. № 2, հոդվ. 20) ձևակերպել հետևյալ խմբագրությամբ.

«5. Կենտրոնացման կարգով (պետական արհեստահարկի 1926 թվի սեպտեմբեր 24-ի կանոնագրքի 26-րդ հոդված,—«Խ. Ս. Հ. Միության Որ. Ժող.» 1926 թվի № 63, հոդվ. 474) հարկադրվելիք ձեռնարկների հավասարաչ տուրքի և արժեքների շրջանառությունից գանձվող հարկի չափը վորոշելու համար, ինչպես նաև պետական ձեռնարկների, կոոպերատիվ միությունների և պետական ու կոոպերատիվ դրամագլխի մասնակցությամբ գործող

բաժնետիրական (փայատիրական) ընկերությունների յեկամտահարկի չափը վորոշելու նպատակով, նմանապես պետական յեկամտային հարկի 1926 թվի սեպտեմբեր 24-ի կանոնագրքի («Խ. Ս. Հ. Միության Որ. Ժող.» 1926 թ. № 64, հոդվ. 484) հիման վրա հարկադրվող իրավական անձերի յեկամտահարկի չափը վորոշելու համար, կազմվում են նահանգական ու դրանց համապատասխան (հոդված 1) ֆինանսական որգաններին կից հատուկ հարկային հանձնաժողովներ»։

7. Հարկային հանձնաժողովների հիշյալ կանոնագրքի 13-րդ հոդվածը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ.

«13. Գավառային (և դրանց համապատասխան), քաղաքային ու հատուկ հարկային հանձնաժողովների վորոշումների դեմ հարկատուներից տված գանգատները (հոդվ. հոդվ. 5, 8 և 10) և նախագահների ու հանձնաժողովներում ներկայացված գերատեսչությունների բողոքները, ինչպես նաև դրոշմատուրքին վերաբերյալ՝ նահանգական և դրանց համապատասխան ֆինանսական որգանների վորոշումների դեմ հարուցած գանգատները քննելու համար կազմվում են նահանգական ու սրանց համապատասխան ֆինանսական որգաններին կից (հոդվ. 1) նահանգական (կամ սրանց համապատասխան) հարկային հանձնաժողովներ»։

8. Հարկային հանձնաժողովների հիշյալ կանոնագրքի («Խ. Ս. Հ. Միության Որ. Ժող.» 1927 թ. № 40, հոդված 397) 14-րդ հոդվածը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ.

«14. Նահանգական կամ դրանց համապատասխան հարկային հանձնաժողովները կազմված են նահանգական ֆինանսական բաժնի կամ դրան համապատասխան որգանի վարիչից և նույն որգանի հարկային վարչության (յենթաբաժնի) վարիչից. այնտեղ մտնում են նաև մի մի

ներկայացուցիչ ժողովրդական տնտեսության խորհրդի կամ տեղական տնտեսության բաժնի կողմից, և ներքին առևտուրը կանոնավորող տեղական որգանի կողմից, նահանգական կամ դրան համապատասխան դատարանի կողմից, 12 անդամներ ել հարկատուների կողմից, այսինքն՝ արհեստահարկ ու յեկամտահարկ վճարողների (պետական ձեռնարկների, կոոպերացիայի և մասնավոր անձերի) յուրաքանչյուր խմբակի կողմից 2-ական անդամ, այն պայմանով, վոր գործերի վճիռներին մասնակցում են այն հարկի և այն խմբակի յերկու անդամը միայն, վորոնց վերաբերում է քննվող գործը։ Դրոշմատուրքին վերաբերյալ գործերի վճիռներին հարկատուներից մասնակցում են մի մի ներկայացուցիչ կոոպերացիայի, պետական ձեռնարկների և մասնավոր անձերի կողմից՝ այդ խմբակների ըստ արհեստահարկի ընտրված ներկայացուցիչների թվից։

Հանձնաժողովի նախագահ է նշանակում պատշաճ նահանգական կամ դրան համապատասխան գործադիր կոմիտեն (իսկ նահանգական բաժանում չունեցող հանրապետություններում — ժողովրդական կոմիսարների խորհուրդը)։

Ծանոթություն. — Դաշնակից հանրապետությունների ֆինանսների ժողովրդական կոմիսարներին իրավունք է վերապահվում խոշոր քաղաքներում և առևտրա-արդյունաբերական կենտրոններում արհեստահարկ ու յեկամտահարկ վճարողների յուրաքանչյուր խմբակի կողմից նշանակված անդամների թիվը ավելացնել մինչև չորս հոգի։

9. Հարկային հանձնաժողովների հիշյալ կանոնագիրքը լրացնել 15[1] հոդվածով՝ հետևյալ խմբագրությամբ.

«15[1]. Արժեքների շրջանառությունից գանձվող հարկը վճարողների ներկայացուցիչ են հանդիսանում հարկային հանձնաժողովներում արհեստահարկի համար նշանակված նրանց ներկայացուցիչները»։

10. ԽՍՀ Միության և դաշնակից հանրապետությունների բյուջետային իրավունքների կանոնագրքի 16-րդ հոդվածի «դ» կետը («ԽՍՀ Միության Որ. Ժող.» 1927 թ. № 27, հոդվ. 286) ձևակերպել հետևյալ խմբագրությամբ.

«դ) ԽՍՀ Միության մեջ դրոշմատուրքի և արժեքների շրջանառությունից գանձվող հարկի ընդհարուր գումարից դաշնակից յուրաքանչյուր պետության համար անելիք մասնահանումներն այն չափով, որը, ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի առաջարկությամբ, որոշում է ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, կատարել ամեն տարի վոչ ուշ, քան բյուջետային տարվա սկզբից մի ամիս առաջ»։

11. Հանձնարարել ԽՍՀ Միության ֆինանսների ժողովրդական կոմիսարիատին մի ամսվա ընթացքում ներկայացնել ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին՝ ԽՍՀ Միության գործող օրենսդրության մեջ առաջացած այն փոփոխությունների նախագծերը, որ հիշված են ներկա կանոնադրության ու կանոնագրքի 1-ին հոդվածում և նախատեսված չեն սույն որոշմամբ, ինչպես նաև ԽՍՀ Միության այն օրենքների ցանկը, որոնք կորցնում են իրենց ույժը հիշյալ կանոնադրությունը և կանոնագիրքը գործադրության մեջ մտցնելով։

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ։

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների խորհրդի նախագահի տեղակալ՝ ՅԱ. ՌՈՒԶՈՒՏԱԿ։

ԽՍՀ Միության Գործադիր Կոմիտեյի քարտուղարի տեղակալ՝ ՊԱԽՈՄՈՎ։

Մոսկվա, Կրեմլ, 14 սեպտեմբերի 1927 թ.

ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇՄԱՏՈՒՐՔԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՏՎԱԾ 1.

Ընդհանուր հիմունքներ

1. Պետական դրոշմատուրքին յենթակա յեն սրան կցված ցուցակում (հավելված 1) նշված՝ ա) գրավոր և հեռագրական դիմումները պետական ու պաշտոնատար անձերին. բ) գրավոր և հեռագրական պատասխաններն ու այլ թղթերը (փաստաթղթերը), որ կառավարական հիմնարկները և պաշտոնատար անձերը տալիս են գրավոր, հեռագրական ու բերանացի դիմումների հետևանքով. գ) գործարքներին վերաբերյալ փաստաթղթերը։

2. Հոդված 1-ի «ա» և «բ» կետերում նշված փաստաթղթերի համար դրոշմատուրք են վճարում՝ պետական հիմնարկներին ու պաշտոնատար անձերին դիմողները, իսկ նույն հոդվածի «գ» կետում նշված փաստաթղթերի համար դրոշմատուրք են վճարում փաստաթղթերի կազմելուն մասնակցող կողմերը, ինչպես նաև այն անձերը, որոնց անցնում են գործարքի վերաբերյալ իրավունքներն ու պարտականությունները՝ փաստաթղթերը փոխանցելիս (հոդված 34)։

3. Ի բացառություն 2-րդ հոդվածի, դրոշմատուրքից ազատվում են անկախ փաստաթղթերի տեսակից, — բացի մուրհակներից, բաժնետոմսերից (փայերից) և պարտատոմսերից, — կառավարական հիմնարկները և բացառությունների

ցանկում (հավելված 2) նշված ձեռնարկները, կազմակերպություններն ու անձերը։

4. Յեթե փաստաթղթերը պարունակում են այնպիսի գործարքներ, վորոնցում կողմերից մեկը ազատ է դրոշմատուրք վճարելուց, այդ դեպքում՝ նման փաստաթղթերով դրոշմատուրքը լինում է — վճարում է մյուս կողմը։

5. Դրոշմատուրքը լինում է — հասարակ և համեմատական։

6. Հասարակ դրոշմատուրքի համար սահմանվում է չորս կարգ. առաջին կարգը – մի ռուբլի 65 կոպ., յերկրորդ կարգը — մի ռուբլի, յերրորդ կարգը — 15 կոպեկ և չորրորդ կարգը—վեց կոպեկ։

7. Համեմատական դրոշմատուրքի համար սահմանվում է յերեք կարգ. առաջին կարգը — փաստաթղթի գումարի 0,5 տոկոսը, յերկրորդ կարգը — 0,15 տոկոսը և յերրորդ կարգը — 0,25 տոկոսը։

Մուրհակներից դրոշմատուրք վճարելիս՝ այդ տուրքը հաշվվում է յուրաքանչյուր 100 ռուբլուց 25 կոպեկ, ըստ այսմ՝ վոչ լրիվ հարյուր ռուբլին համարվում է իբրև լրիվ։

9. Դրոշմատուրքի յենթակա փաստաթղթերի ցանկը և փաստաթղթերը հասարակ կամ համեմատական դրոշմատուրքի այս կամ այն կարգի մեջ հաշվելը սահմանվում է սույն կանոնադրության կցված ցուցակով (հավելված 1)։

Դրոշմատուրքի վերաբերյալ բացառությունների ցանկը գետեղված է սույն կանոնադրությանը կցված հավելված 2-ում։

ԽՍՀ Միության Ֆինանսական Ժողովրդական Կոմիսարիատին իրավունք է վերապահվում՝ սահմանել լրացուցիչ կերպով դրոշմատուրքին վերաբերյալ այն բացառությունները, վորոնք նախատեսված չեն հիշյալ ցանկի մեջ։

9. Կառավարական հիմնարկին կամ պաշտոնատար անձին մի անձի կողմից՝ թեկուզ մի քանի գործերով, կամ

մի քանի անձերի իրենց համար մի ընդհանուր գործով արած դիմումի համար (մի թղթով) դրոշմատուրքը վճարվում է վորպես մի փաստաթղթի համար։ Դիմումին տրված յուրաքանչյուր պատասխան-թուղթ յենթակա յե առանձին դրոշմատուրքի վճարման։

10. Փաստաթուղթը, յեթե նա պարունակում է մի քանի ինքնուրույն առանձին գործարքներ, յենթակա յե համեմատական դրոշմատուրքի՝ յուրաքանչյուր գործարքի համար առանձին։

11. Գործարքին վերաբերյալ փաստաթղթի գումարը համարվում է այն գումարը, վորը ցույց են տվել կողմերը՝ պահպանելով 12 — 19 հոդվածներում ցույց տրված կանոնները։

Ծանոթություն. — Փաստաթղթի գումարի մեջ չեն մտնում գործարքով պայմանավորված տոկոսները, վոր ստացվում են գործարքի վճարման համար տրված մուրհակների ղեղջից։

12. Փաստաթղթի գումարը վորոշելիս՝ շենքերի արժեքը հաշվվում է նրանց ապահովագրական կամ հարկային գնահատությունից վոչ պակաս, նայած՝ թե այդ գնահատություններից վորն ավելի բարձր է։

13. Բաժնետոմսերից (փայերից) և պարտատոմսերից դրոշմատուրքը գանձվում է համաձայն նրանց անվանական գնի։

14. Այն փաստաթղթի գումարը, վորով վճարումները կատարվում են պարբերաբար (գույքային վարձույթին, կառուցման իրավունքը վորոշելուն վերաբերյալ փաստաթղթերը և այլն), — հաշվվում է փաստաթղթի ներգործության ամբողջ ժամանակամիջոցում հասանելիք վճարումների միահամռությամբ, իսկ յեթե փաստաթղթի ներգործության ժամկետը չի նշված, այդ դեպքում՝ մի տարվա համար հասանելիք վճարումների միահամռությամբ։

15. Գործարքների իրավունքներն ու պարտականությունները փոխանցելուն վերաբերյալ փաստաթղթի գումարը համարվում է դեռ չիրագործված իրավունքների կամ փոխանցվելիք պարտականությունների արժեքը։

16. Մասնավորապես՝ փաստաթղթի գումարը համարվում է. ա) փոխանակության փաստաթղթերով — փոխանակելիք գույքերից մեկի արժեքը (հաշված նաև դրամական հավելավճարը). բ) նախավաճառքի գրանցումներով և պայմանագիրը կնքելուց առաջ կանխավճարի ու հավատչեքի ստացականներով տրվելիք նախավաճառքի գրանցման կամ ստացագրի գումարը (հոդվ. 22). գ) մուրհակներով և պարտատոմսերով—պարտքի հիմնական գումարը. դ) ապահովագրման փաստաթղթերով — ապահովագնի գումարը. ե) ընկերություններ և այլ բաժնետիրական կազմակերպություններ հիմնելու փաստաթղթերով — դրանց մեջ մտցրած դրամագլխի գումարը՝ թե կանխիկ դրամով, և թե այլ գույքի ձևով՝ այն գնահատությամբ, որն ընդունել են կազմակերպության մասնակցողները, ինչպես նաև անձնական աշխատանքի ձևով, եթե վերջինս հատուկ գնահատված է պայմանագրի մեջ։ Այն դեպքում, երբ իբրև բաժին մուծվում է ամբողջ մի ձեռնարկություն, որ ունի իր հաշվեկշիռը, (բալանսը), դրոշմատուրքի չափը որոշելու համար, այդ ձեռնարկի արժեքը հաշվվում է հավասար նրա բալանսի դրական սալդոյին. զ) կոնցեսիոն պայմանագրերով — վարձակալական վճարումների և կառավարության ոգտին կոնցեսիոների կողմից պայմանագրի ներգործության ամբողջ ժամանակամիջոցում արած մասնահանումների ընդհանուր գումարը։

17. Գույքային վարձույթի պայմանագրին վերաբերյալ փաստաթղթի գումարի մեջ մտնում են, բացի պայմանավորված վճարումներից՝ ա) պայմանագրով պայմանավորված շենքերի ու այլ կառուցվածքների, ինչպես նաև

շինությունների սարքավորման արժեքը, եթե շենքերը, կառուցվածքները և սարքավորումը պետք է, ըստ պայմանագրի, ձրիաբար անցնեն գույքի տիրոջը՝ պայմանագիրը լրանալուց հետո. բ) պայմանագրով պայմանավորված շենքերի հիմնական նորոգության արժեքը, եթե պայմանագիրը կնքելիս վորոշված է նորոգության գումարը։

18. Այն փաստաթուղթը, վորի գումարը չի կարող ճիշտ վորոշվել իրա բովանդակությունից, մասնավորապես այն փաստաթղթերը, վորոնց մեջ գումարը վորոշված է «մինչև», «վոչ ավելի», «մոտ», «մոտավորապես» և այլն արտահայտություններով, համարվում են անորոշ գումարի փաստաթղթեր։

Յեթե փաստաթղթի բովանդակությունից կարելի է ճիշտ վորոշել գումարի մի մասը, այդ դեպքում՝ այդ մասում փաստաթղթի գումարը համարվում է վորոշ, իսկ մնացած մասում — անորոշ. ի մասնավորին՝ այն փաստաթղթերը, վորոնց մեջ սահմանակետային գումարը նշանակված է «այսքանից մինչև այսքան» արտահայտությամբ, համարվում են վորոշ՝ ցույց տրված գումարներից փոքրագույնի չափով։

19. Այն դեպքում, երբ փաստաթուղթը կազմվում է ռուբլերկրյա արժույթով, նրա գումարը վորոշվում է Մոսկվայի ապրանքային բորսայի ֆոնդային բաժնի վերջին արժեգնով (կուրսով), վոր հայտնի է փաստաթուղթը կազմելու մոմենտին։

20. Այն փաստաթղթերը, վոր կազմվում են Խ. Ս. Հ. Միության սահմաններում այնպիսի գործարքների մասին, վորոնք իրագործվում են արտասահմանում, յենթակա են դրոշմատուրքի՝ ընդհանուր հիմունքներով. իսկ այն փաստաթղթերը, վոր կազմված են արտասահմանում և ուղարկվում են Խ. Ս. Հ. Միություն՝ իրագործելու համար, ինչպես նաև դրանց փոխարինող պատճենները, պետք է յեն-

թարկվեն դրոշմատուրքի վճարման, համաձայն սույն կանոնադրության, բայց միայն փաստաթղթի այն մասի վերաբերմամբ, որ պետք է գործադրվի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմաններում։

Գործարքներին վերաբերյալ այն փաստաթղթերը, որ կազմված են արտասահմանում գտնված դաշնորդների (կոնտրագենտների) հետ վարած գրագրության միջոցով, յենթակա յեն դոշմատուրքի վճարման, որպես ԽՍՀ Միության սահմաններում կազմված փաստաթղթեր։

21. Դրոշմատուրքից ազատ են գործարքներին վերաբերյալ այն փաստաթղթերը, որոնց գումարն ավելի չե հինգ ռուբլուց։

22. Գրավոր պայմանագիրը կնքելուց առաջ տրված կանխավճարի և առհավատչեքի ստացագրերով գանձված համեմատական դրոշմատուրքը պետք է հաշվառվի այն տուրքի ընդհանուր գումարի մեջ, որ ստացվելու յե պայմանագից։

ՀԱՏՎԱԾ II

Փաստաթղթերի դրոշմատուրքի վճարման ժամկետները.

23. Հոդված 1-ի «ա» կետում նշված դիմումների համար դրոշմատուրքը վճարվում է դիմումները տալիս։ Հենց այդ ժամանակ ել վճարվում է այն տուրքը, որ պետք է ստացվի այդ դիմումներով տրվելիք թղթերի (փաստաթղթերի) համար։

Կառավարական հիմնարկներին և պաշտոնատար անձերին բերանացի դիմումներով տրվելիք թղթերի (փաստաթղթերի) համար դրոշմատուրքը վճարվում է հենց դիմումն անելիս։

24. Այն դեպքում, յերբ ստացվում են գրավոր կամ հեռագրական դիմումներ, որ յենթակա յեն դրոշմա-

տուրքի, բայց դրոշմատուրքը վճարված չե, կառավարական հիմնարկներին ու պաշտոնատար անձերին իրավունք է վերապահվում — չկատեցնել գործավարությունը և դրոշմատուրքը գանձել դիմումների համար պահանջված պատասխանը տալիս։

Ծանոթություն. — Կառավարական հիմնարկներին ու պաշտոնատար անձերին վորոշված ժամկետին տրված այն գանգատները, վորոնց համար վճարված չե դրոշմատուրք, պետք է քննության առնվեն, թեկուզ նրանցից գանձվելիք դրոշմատուրքը վճարված է յեղել այդ ժամկետն անցնելուց հետո։

25. Վորոշված գումարով գործարքներին վերաբերյալ փաստաթղթերի համար դրոշմատուրքը վճարվում է վոչ ուշ, քան յերկու շաբաթվա ընթացքում, հաշված նրանց կազմելու որից, բացառությամբ այն փաստաթղթերի, որ նշված են 29 — 34 հոդվածներում։

Յերկշաբաթյա այս ժամկետն ընդմիջվում է՝ ա) այն դեպքում, յերբ փաստաթուղթը տրվում է մի յերրորդ անձի՝ փոխանցման մակագրությամբ, կամ հատուկ պայմանագրով. բ) այն դեպքում, յերբ փաստաթուղթը ներկայացվում է կառավարական հիմնարկին կամ պաշտոնատար անձին, այդ թվում նաև նոտարին, որը գործարքի մեջ կողմ չի հանդիսանում։

Այդ դեպքերում դրոշմատուրքը վճարվում է վոչ ուշ, քան այն որը, յերբ փաստաթղթերը փոխանցվել կամ ներկայացվել են։

Փաստաթուղթը կազմելու որը համարվում է՝ յերկկողմանի գործարքների համար այն որը, յերբ կողմերն ստորագրում են փաստաթուղթը, միկողմանի գործարքների համար — փաստաթուղթը մյուս կողմին հանձնելու կամ ուղարկելու որը. հետակա հաստատումն պահանջող փաստաթղթերի համար — հաստատման որը, իսկ գրագրության միջոցով կնքված փաստաթղթերի համար — այն

որը, յերբ պայմանավորվող կողմը հաղորդագրություն է ստանում արված առաջարկի վերաբերմամբ վերջնական համաձայնության մասին կամ այն փաստաթուղթն ստանալու որը, վորով հաստատվում է գործարքը կատարելու սկիզբը։

Մանրություն. — Նոտարի ցուցմունքով ուղղված և արտագրված փաստաթղթերի համար յերկրորդ անգամ դրոշմատուրք չի վճարվում։

26. Գործարքներին վերաբերյալ այն փաստաթղթերի համար, — վորոնք պետք է հաստատվեն նոտարի կողմից, վորպեսզի անվավեր չհամարվեն, — դրոշմատուրքը վճարվում է նոտարական հավաստիացման միջոցին, անկախ այն որից, յերբ կողմերն ստորագրում են այդ փաստաթղթերը։

27. Յերկաթուղային բեռնագրերի ու դրանց կրկնակների և նավագնացային ձեռնարկությունների սերտեպաքտիանների, նավաբեռնագրերի ու անդորրագրերի համար դրոշմատուրքը վճարվում է դրանց տալու միջոցին. սակայն այն դեպքում, յերբ փոխադրության վճարը կատարվում է հասցեյատիրոջ կողմից բեռն ստանալիս, թույլատրվում է, վորպեսզի դրոշմատուրքը վճարվի բեռը հանձնելիս։

28. Բաժնետիրական (փայատիրական) ընկերությունների սկզբնական բացթողի բաժնետոմսերի (փայատոմսերի) և դրանց փոխարինող վկայականների համար դրոշմատուրքը վճարվում է համաձայն տվյալ ընկերության հիմնական կամ փայերի ամբողջ դրամագլխի՝ հիշյալ թղթերի թեկուզ մի մասը փաստորեն բաց թողնելիս, բայց համենայն դեպս՝ վոչ ուշ, քան յերեք ամսվա ընթացքում՝ հաշված այն որից, յերբ տվյալ բաժնետիրական (փայատիրական) ընկերությունը տոմարագրվել է։

Հենց այդ կարգով էլ դրոշմատուրք է վճարվում լրացուցիչ կերպով բաց թողնված բաժնետոմսերի (փայատոմսերի) համար՝ համաձայն յուրաքանչյուր բացթողի գումարի։

29. Այն փաստաթղթերի համար, վորոնք հաստատում են, թե փոխադարձ վարկի ընկերության անդամներն ստացել են այդ ընկերության շրջանառության դրամագլխի մեջ մտցած իրենց մուծումները, դրոշմատուրքը վճարվում է այդ փաստաթղթերը հանձնելիս։

30. Գույքի մի տարուց ավելի ժամկետով վարձույթի և կառուցման պայմանագրերով դրոշմատուրքի վճարումը կատարվում է յուրաքանչյուր տարվա մուծումներով՝ ամեն տարվա համար առաջուց՝ յերկու շաբաթվա ընթացքում. առաջին տարվա համար—հաշված՝ պայմանագիրը կնքելու որից, իսկ հետագա տարիների համար — հաշված՝ տարին սկսվելիս։

1003
14168

31. Առանց ժամկետը նշելու գույքի վարձույթին վերաբերյալ պայմանագրերով դրոշմատուրքի վճարումը կատարվում է առաջուց՝ կիսամյակներով՝ յերկու շաբաթվա ընթացքում. առաջին կիսամյակի համար — հաշված՝ պայմանագիրը կնքելու որից, իսկ հետևյալ կիսամյակների համար — հաշված յուրաքանչյուր նոր կիսամյակն սկսվելիս։

32. Արտասահմանում կազմված և կատարվելու համար ԽՍՀ Միության սահմանները մուծվող (հոդված 20) փաստաթղթերի համար դրոշմատուրքը վճարվում է յերկու շաբաթից վոչ ուշ, հաշված նրանց կատարման որից։

33. Անորոշ գումարով փաստաթղթերի համար վճարվում է առաջին կարգի դրոշմատուրք՝ նրանց կատարման որից վոչ ուշ, քան յերկու շաբաթում, իսկ այնուհետև փաստաթղթի գումարը հետզհետե պարզվելու հետ միասին համեմատական դրոշմատուրքի վճարը կատարվում է յերկու շաբաթվա ընթացքում՝ գումարը պարզվելուց հետո,

ըստ վորում, սկզբնապես վճարված տուրքի գումարը հաշվի յե առնվում։

Յերբ փաստաթուղթը վերաբերում է այնպիսի պայմանական գործարքի, վոր դառնելու յե պարտադիր միայն ապագայում, յերբ իրագործվի նախատեսված պայմանը, ինչպես նաև տուժանքին (նեուստոյկային) վերաբերող փաստաթղթերը յենթարկվում են դրոշմատուրքի գանձման վոչ ուշ, քան յերեք շաբաթվա ընթացքում, հաշված նրանց կազմելու որից։

Այդ փաստաթղթերից գանձվելիք համեմատական դրոշմատուրքը լրացուցիչ կերպով կատարվում է յերկշաբաթյա ժամկետում՝ պայմանը լրանալուց կամ տուժանքի պայմանագիրն իրագործելուց հետո, հաշվակցելով վճարված հասարակ դրոշմատուրքը։

Այն փաստաթղթերի համար, վորոնք կազմելիս նրանց գումարը վորոշված է միայն մի մասի մեջ, հարաբերական դրոշմատուրք է վճարվում այդ վորոշված մասից՝ փաստաթուղթը կազմելու որից հաշված յերկու շաբաթվա ընթացքում, իսկ մնացած մասից — լրացուցիչ կերպով յերկշաբաթյա ժամկետում՝ գումարը պարզվելուց հետո։

Այն փաստաթղթի համար, վորի մեջ կան միքանի գործարքներ՝ անորոշ գումարով, հասարակ դրոշմատուրքը վճարվում է անկախ գործարքների թվից, իսկ համեմատականը — ըստ յուրաքանչյուր գործարքի առանձին։

34. Յերբ փոխանցվում են այնպիսի փաստաթղթեր, վորոնց համար չի վճարված կամ ճիշտ չի վճարված դրոշմատուրքը, այդ դեպքում՝ այն անձինք, վոր այդ փաստաթղթերով ձեռք են բերում իրավունքներ ու պարտականություններ, — վճարում են փաստաթղթերից գանձվելիք դրոշմատուրքը յերկու շաբաթվա ընթացքում, հաշված փոխանցման որից։

ՀՈՍՎԱԾ III.

Դրոշմատուրքը վճարելու կարգը

35. Դրոշմատուրքը վճարվում է. ա) կանխիկ դրամով, բ) դրոշմանիշներով (թղթով և փոստանշերով) կամ գ) խառն տուրքով, այսինքն՝ մի մասը կանխիկ դրամով, իսկ մյուս մասը դրոշմանիշներով։

36. Բաժնետոմսերից և փայատոմսերից ու դրանց փոխարինող ժամանակավոր վկայականներից գանձվելիք դրոշմատուրքը վճարվում է կանխիկ դրամով։

37. Մուրհակների դրոշմատուրքի վճարումը կատարվում է մուրհակային բլանկների վրա նրանց գրանցումով։

38. Դրոշմատուրքը կանխիկ դրամով վճարելը կատարվում է համապատասխան գումարը մտցնելով ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի գանձարկղը կամ այն հիմնարկների ու պաշտոնատար անձերի գանձարկղը, վորոնց՝ համապատասխան դաշնակից հանրապետության ֆինանսների ժողովրդական կոմիսարիատն իրավունք է վերապահել այդ տեսակ գումարներ ընդունելու։

39. «Ռազբորները» և դրոշմանիշների նմուշները սահմանում է ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը։

40. Դրոշմանիշների շինության (վճարման) և փաստաթղթերի պահանջված դրոշմատուրքի վճարման կարգը սահմանվում է այն կանոններով, վոր հրատարակում է ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը։

ՀՈՍՎԱԾ IV.

Դրոշմատուրքի վերստուգումների մասին

41. Ներկա կանոնադրությունը ճիշտ կիրառելու հսկողության կարգով ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը, դաշնակից հանրապետությունների ֆի-

նանսերի ժողովրդական կոմիսարիատները և նրանց, նահանգական (շրջանային) ֆինանսական բաժիններից ու դրանց համապատասխան ֆինանսական որգաններից վոչ ցածր, տեղական որգանները կարող են նշանակել իրենց յենթակա տերրիտորիայի սահմաններում կառավարական հիմնարկների, պաշտոնատար անձերի, պետական, կոոպերատիվ ու մասնավոր ձեռնարկությունների և այլ հիմնարկների դրոշմատուրքի վերատուգումներ։

Դրոշմային վերատուգումներ կատարելու գործը հանձնվում է ֆինանսական որգանների պաշտոնատար անձերին՝ յուրաքանչյուր անգամ հատուկ լիազորությամբ։

42. Ներկա կանոնադրության հոդված 1-ում նշված փաստաթղթերը պետք է պահվեն յերեք տարվա ընթացքում և պիտի ներկայացվեն վերատուգում կատարելու իրավունք ունեցող պաշտոնատար անձերին՝ սրանց պահանջով։ Այդ պահանջը չկատարողները յենթարկվում են պատասխանատվության՝ դաշնակից հանրապետությունների քրեական որենքգրքի համապատասխան հոդվածներով։ Սույն հոդվածում ցույց տրված յեռամյա ժամկետը հաշվվում է՝ պայմանագրերի և հանձնառությունների համար՝ նրանց զորությունը դադարելու որից, մյուս փաստաթղթերի համար – նրանց կազմելու ժամանակից։

43. Հոդված 42-ում նշված ժամկետը կարող է հարկատուների և փաստաթղթերի վորոշ կատեգորիաների համար կրճատվել ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական կոմիսարիատի կողմից՝ համապատասխան գերատեսչությունների հետ համաձայնության գալուց հետո։

ՀԱՏՎԱԾ V.

Դրոշմատուրքի կանոնները խախտելու պատիժների մասին

44. Դրոշմատուրքի կանոնները խախտելու համար պատասխանատու յեն. ա) սույն կանոնադրության հոդ-

ված 1-ի «ա» և «բ» կետերում նշված փաստաթղթերի վերաբերմամբ — պաշտոնատար այն անձինք, վորոնց վրա ըստ տվյալ հիմնարկի պարտականություն է տրված՝ դիտողություն ունենալ, վորպեսզի հիշյալ փաստաթղթերի համար դրոշմատուրքը վճարվի. բ) հոդված 1-ի «գ» կետում նշված փաստաթղթերի համար գործարքին մասնակցող կողմերը, ինչպես նաև այն անձինք, վորոնց այդ փաստաթղթերը փոխանցված են հոդվ. 34-ի կարգով։ Ըստ այսմ, յեթե հիշյալ փաստաթղթերը հաստատված են նոտարական կամ դրանց փոխարինող որգանների կողմից, այդ դեպքում՝ կողմերը պարտավոր են վճարել դրոշմատուրքի չվճարված գումարը, իսկ վերոհիշյալ որգանները պատասխանատու յեն այն անկանոնությունների համար, վոր տեղի յեն ունեցել դրոշմատուրքի վճարման վերաբերմամբ՝ նրանց մասնակցությամբ։

45. Հոդված 44-ի «ա» կետով պատասխանատու պաշտոնատար անձինք և նոտարական ու դրանց փոխարինող որգանների պաշտոնատար անձինք դրոշմատուրքի կանոնները խախտելու համար պատիժ են կրում կարգապահական կարգով։

46 Գործարքին մասնակցող կողմերը դրոշմատուրքի կանոնները խախտելու համար յենթարկվում են համապարտ պատասխանատվությամբ դրամական տուգանքի (հոդվ. 49), բացառությամբ՝ ա) նախահաշվային կարգով համապետական կամ տեղական բյուջեյով պահվող կառավարական հիմնարկների և պետական (այդ թվում նաև կոմմունալ) ձեռնարկների, վորոնց պաշտոնատար անձինք ու աշխատակիցները (վոր գործարքը կատարելիս ներկայացրել են այդ հիմնարկներն ու ձեռնարկները) յենթարկվում են կարգապահական պատասխանատվության՝ կարգապահական կամ վարչական կարգով. բ) բացառությամբ այն անձերի, վոր կողմ են հանդիսանում՝ շրջանային, ռա-

յոնական և դրանց համապատասխան գործադիր կոմիտեների, ինչպես նաև գյուղական խորհուրդների հետ կատարված գործարքներում, որպիսի դեպքերում պատասխանատվությունն ընկնում է հիշյալ գործադիր կոմիտեների և խորհուրդների համապատասխան պաշտոնատար անձերի վրա՝ այն կարգով, որ նախատեսված է սույն հոդվածի «ա» կետում։

47. Ի բացառություն հոդվ. 46-ում նշված կանոնի, փաստաթղթերի համար պահանջվելիք դրոշմատուրքը չվճարելու կամ ուղիղ չվճարելու պատասխանատվությունն ընկնում է միայն մի կողմի վրա՝ 1) բաժնետոմսերի (փայատոմսերի) ու պարտատոմսերի և դրանց փոխարինող ժամանակավոր վկայականների վերաբերմամբ — այդ թղթատոմսերը բաց թողնող ձեռնարկների ու ընկերությունների վրա. 2) անդամակցական մուծումները փոխադարձ վարկի ընկերության շրջանառության դրամագլխի մեջ մտցնելը հաստատող փաստաթղթերի վերաբերմամբ — հիշյալ ընկերության վրա. 3)փոխանորդագրերի վերաբերմամբ — փոխանորդյալների վրա։

48. Դրոշմատուրքի կանոնների այն խախտումների վերաբերմամբ, որ իրենց թույլ են տվել փոխանորդները, յերբ գործարքներ են կատարել փոխանորդյալների անունից, պատասխանատվությունը կրում են փոխանորդյալները և նրանց փոխանորդները՝ համապարտորեն։

49. Դրամական տուգանքները սահմանվում են հետևյալ չափով. ա) դրոշմատուրքը չվճարելու, լրիվ չվճարելու և իր ժամանակին չվճարելու համար — վոչ ավելի, քան չվճարված, լրիվ չվճարված և իր ժամանակին չվճարված տուրքի տասնապատիկը. բ) կանոնների ձևական բնույթ կրող խախտումների համար (դրոշմանիշները սխալ փակցնելու, դրանց սխալ շիջուցման համար և այլն) դրոշմատուրքն իր ժամանակին վճարելու դեպքում — վոչ

ավելի, քան դրոշմատուրքի այն գումարը, որը վճարելիս խախտվել են այդ կանոնները։

50. Հոդված 34-ով նախատեսված ժամկետին դրոշմատուրքի վճարումն այն անձերի կողմից, — որոնց փոխանցված են այնպիսի փաստաթղթեր, որոնց համար դրոշմատուրք չի վճարվել, կամ սխալ է վճարված, — չի ազատում փաստաթղթի կազմելուն մասնակցող կողմերին տուրքն իր ժամանակին չվճարելու պատճառով գանձելիք տուգանքից։

51. Դատարանի կողմից անվավեր համարված փաստաթղթերի վերաբերմամբ, որոնցով կիրառում տեղի չի ունեցել, դրոշմատուրքը և տուգանքը չպիտի գանձվեն, իսկ յերբ վճարված են, պետք է վերադարձվեն։

52. Գործարքը կազմելուն մասնակցող կողմը, ինչպես նաև այն անձը, որին հոդվ. 34-ի կարգով փոխանցվել է փաստաթուղթը, և դրանք վճարել են դրոշմատուրքն ու տուգանքը, իրավունք ունեն հետ պահանջելու նույն գործարքի մյուս մասնակիցներից սրանց վրա ընկնող դրոշմատուրքի և տուգանքի մասը, յեթե ուրիշ պայման նախատեսված չե որենքով, կամ կողմերի համաձայնությամբ։

53. Դրոշմատուրքը և տուգանքը չեն գանձվում, յեթե որինախախտումը յերևան է հանված խախտման որից յերեք տարի անցնելուց հետո։

ՀԱՏՎԱԾ VI.

Դրոշմատուրքի կանոնները խախտելուն վերաբերյալ գործերի քննության կարգը

54. Կառավարական հիմնարկներն ու պաշտոնատար անձինք, բացառությամբ հոդվ. հոդվ. 55 և 56-ում նշվածների, հաղորդում են տեղական նահանգական (շրջա-

նային) ֆինանսական բաժնին (կամ դրան համապատասխան ֆինանսական որգանին) դրոշմատուրքի կանոնների այն բոլոր խախտումների մասին, վոր յերևան են հանված իրենց գործավարության մեջ մտած փաստաթղթերում, կցելով իսկական փաստաթղթերը, կամ սրանց պատճենները։

55. Դատական հիմնարկները, յերբ նրանց ներկայացնում են այնպիսի փաստաթղթեր, վորոնց համար չի վճարված, կամ սխալ է վճարված դրոշմատուրքը, վորոշում են կայացնում դաշնակից հանրապետությունների քաղաքացիական — դատավարական որենսգրքերի համապատասխան հոդվածների կարգով, այդ վորոշումների պատճեն ուղարկելով նահանգական (շրջանային) ֆինանսական բաժնին (կամ դրան համապատասխան ֆինանսական որգանին)։

56. Նոտարական գրասենյակները և դրանց փոխարինող որգանները, յերբ իրենց ներկայացնում են այնպիսի փաստաթղթեր, վորոնց համար չի վճարված, կամ սխալ է վճարված դրոշմատուրքը,—առաջարկում են այդ փաստաթղթերը ներկայացնող անձերին — վճարել դրանցից պահանջված դրոշմատուրքը, ըստ այսմ, մինչև դրոշմատուրքը չի վճարվի, նոտարական գործողություններ չեն կատարում։ Դրանից անկախ, հիշյալ որգանները հաղորդում են նահանգական (շրջանային) ֆինանսական բաժնին (կամ դրան համապատասխան ֆինանսական որգանին) դրոշմատուրքի կանոնադրության իրենց հայտնաբերած խախտումների մասին։

57. Նահանգական (շրջանային) ֆինանսական բաժինը (կամ նրան համապատասխան ֆինանսական որգանը) 41, 54 և 56 հոդվածների կարգով իր ստացած նյութերի հիման վրա, ինչպես նաև իր հայտնաբերած որինախախտումների վերաբերմամբ, մի ամսյա ժամանակամիջոցում վորոշումներ է կայացնում դրոշմատուրքը ու տուգանքը

գանձելու մասին և այդ վորոշումները հաղորդում է հիշյալ գումարները վճարելու պարտավոր անձերին (հոդվ. 44), իսկ հարկ յեղած դեպքերում (45) հայտնում է պաշտոնատար անձերի գլխապետությանը՝ կարգապահական կարգով քննություն կատարելու կամ սահմանված կարգով գործերը ուղարկում է կարգապահական դատարանին։

58. Պաշտոնատար անձերի գլխապետությունը (հոդված 44) ծանուցումն ստանալու որից մի ամսյա ժամանակամիջոցում իր արած կարգադրությունների մասին հայտնում է ֆինանսական այն որգանին, վորից ստացված է յեղել ծանուցումը։

59. Նահանգական (շրջանային) և դրանց համապատասխան ֆինանսական որգանների վորոշումների դեմ՝ դրոշմատուրքը և տուգանքը գանձելու մասին (հոդվ. 57), հարկատուին այդ առթիվ իրազեկ անելու որից մի ամսվա ընթացքում՝ կարելի յե գանգատ տալ նահանգական կամ դրան համապատասխան հարկային հանձնաժողովին (հարկային հանձնաժողովների կանոնադրության հոդվ. 14)։

60. Գանգատ տալը չի կասեցնում գանձումը, սակայն հարկատուների հարուցած միջնորդությամբ՝ վորոշումը կայացրած ֆինանսական որգանին, ինչպես նաև Ա. Ս. Հ. Միության և դաշնակից հանրապետությունների ֆինանսների ժողովրդական կոմիսարիատներին իրավունք է վերապահվում—կասեցնել այն վորոշումներով պահանջվելիք գանձումները, վորոնց դեմ գանգատ է տրված սահմանված ժամկետում։

Պետական ձեռնարկության, կոոպերատիվ կազմակերպության և բաժնետիրական այն ընկերության բողոք տալը,—վորի մեջ բացառապես կամ գլխավորապես մասնակցում է պետական դրամագլուխը,—կասեցնում է տուգանքի վճարումը՝ մինչև վերջնականապես կվճռվի գանգատը, յեթե համապատասխան տայանների վորոշումների

դեմ գանգատը տրվում է մի ամսյա ժամկետում՝ գանգատարկված վորոշումը հայտարարելուց հետո։

61. Դրոշմատուրքի և տուգանքի գումարները հաշվվում են ապառք՝ տուրքն ու տուգանքը գանձելու վորոշման մասին հարկատուներին հայտնելու որից մի ամիս անցնելուց հետո, այն պայմանով, վոր տույժը բարդվում է միայն տուրքի գումարի վրա։

62. Հոդված 59-ում նշված ժամկետերի ժամանակն սկսվում է յուրաքանչյուր առանձին հարկատուի համար՝ գանձումի մասին պահանջը նրան ներկայացնելու որից։

Խ.Ս.Հ. Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ։

Խ.Ս.Հ. Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝ ՅԱ. ՌՈՒԶՈՒՏԱԿ։

Խ.Ս.Հ. Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղարի տեղակալ՝ ՊԱԽՈՄՈՎ։

Մոսկվա, Կրեմլ, 14 սեպտեմբերի 1927 թ.

ՑՈՒՑԱԿ

Այն փաստաթղթերի, վորոնց համար դրոշմատուրք է վճարվում

Փաստաթղթերի անունը	Հատուկ դրամ	Համեմատական
§ 1. Կառավարական հիմնարկներին և պաշտոնատար անձերին արված գրավոր ու հեռագրական դիմումները, բացառությամբ 3-րդ պարագրաֆում նշվածների	2	
§ 2. Գրավոր և հեռագրական պատասխանները և այլ թղթերը (փաստաթղթերը), վոր տալիս են կառավարական հիմնարկները և պաշտոնատար անձերը՝ իրենց արված գրավոր, հեռագրական ու բերանացի դիմումների համար, բացառությամբ 3-րդ պարագրաֆում նշվածների	2	
§ 3. Ծննդյան ու մահվան մասին քաղաքացիական վիճակի ակտերի գրքերից քաղվածքներ ստանալու համար գրավոր և հեռագրական դիմումները, ինչպես նաև հիշյալ քաղվածքները	3	
§ 4. Մուրհակների և նրանց բողոքների վարրանտների վրա արված մակագրությունները	2	
§ 5. Անտառահատման տոմսերը . . .	2	

Փաստաթղթերի անունը	հասարակ	համեմատական
§ 6. Փոխանորդագրերը, այդ թվում նաև հեռագրա-փոխանորդագրերը.		
ա) գործարքներ կազմելու և գույքը կառավարելու համար	1	
բ) Դատական գործեր վարելու, ինչպես նաև վարչական հիմնարկներում գործեր վարելու համար	2	
§ 7. Ընդհանուր գույքի բաժանելու ակտերը, վոր հաստատված են նոտարական կարգով	1	
§ 8. Արժույթային և ֆոնդային արժեքներ գնելուն, վաճառքին ու փոխանակությանը վերաբերյալ փաստաթղթերը.		
մինչև 3000 ռուբլի	3	
3000 ռուբլուց վեր մինչև 5000 ռ.	2	
5000 ռուբլուց վեր	1	
§ 9. Կանխիկ դրամի համար բանկերի տված կրեդիտիվները, հետևյալ գումարներով.		
մինչև 1000 ռուբլի	3	
1000 ռուբլուց վեր	2	
§ 10. Բաժնետիրական (փայատիրական) ընկերությունների բաժնետոմսերը կամ փայատոմսերը և դրանց փոխարինող փաստաթղթերը, ինչպես նաև փոխադարձ վարկի ընկերության շրջանառության դրամագլխի մեջ մտցրած մուծումներն ստանալու մասին տրված անդորրագրերը	—	1
§ 11. Մուրհակները	—	2
§ 12. Պարտատոմսերը	—	2

Փաստաթղթերի անունը	հասարակ	համեմատական
§ 13. Անվանական արժեթղթերը այլ անձի փոխանցելու մակագրությունները	—	3, բայց վոչ ավելի
§ 14. Կտակները	1	1 կարգի հասարակ դրոշմատուրքից.
§ 15. Պայմանագրերը.		
ա) շենքերի ոտարման մասին .	—	1
բ) կառուցման իրավունք ձեռք բերելու մասին	—	3
գ) կառուցման իրավունքի ոտարման մասին	—	1
դ) առևտրական և արդյունաբերական ձեռնարկների ոտարման մասին	—	1
ե) ամեն տեսակ գույքի նվիրման պայմանագրերը	—	1
զ) շենքերի ու շինությունների վարկույթի մասին, հավաստիացված նոտարական կարգով . . .	—	1
ը) մասնավոր անձերի կողմից հողածոցերի վարձակալության մասին, հավաստիացված նոտարական կարգով	—	1
թ) ծովային և գետանավերի (այդ թվում նաև ըստ թայմ-չարտերի) ոտարման ու վարձույթի մասին	—	1
ժ) լրիվ, «ինա վերե» և սահմանափակ պատասխանատվությամբ կազմված ընկերությունների պայմանագրերը	—	1
ի) հասարակ ընկերության պայմանագրերը	—	3
§ 16. Կոնցեսիոն պայմանագրերը .	—	1
§ 17. Կանխական պայմանագրեր պարունակող փաստաթղթերը, վոր պարտավորացնում են կողմերին		

Փաստաթղթերի անունը	Կամ-տուրք	համեմատական
կնքելու սույն ցուցակի 15-րդ պարագրաֆում նշված գործարքները (բացի շենքերի կանխավաճառքի գրանցումներից — սույն ցուցակ 18 պարագր.)	1	
§ 18. Շենքերի ոտարման կանխավաճառքի գրանցումները	—	3
§ 19. Կանխավճարի և առհավատչեքի ստացագրերը, տրված այն պայմանագրերի վերաբերմամբ, որոնք նախատեսված են սույն ցուցակի 15 պարագրաֆով, մինչև պայմանագրերի կնքելը . . .	—	3, բայց վոչ պակաս 4 կարգի հասարակ դրոշմատուրքից։
§ 20 Սույն ցուցակի 15, 16 և 17 պարագրաֆներում նշված պայմանագրերը փոփոխելու կամ առաջուց կնքած պայմանագրերը լրացնելու, ինչպես նաև նրանց իրագործումը հերաձգելու մասին կազմած պայմանագրերը (առանձին ակտերի ձևով կամ այլ ակտերի վրա արած մակագրությունների ձևով), առանց ավելացնելու նրանց գումարը	1	
§ 21. Գրավի փաստաթղթերը, որոնք կազմվում են ապահովելու համար սույն ցուցակի 15 պարագրաֆում նշված պայմանագրերի կատարումը, առանձին ակտերի ձևով կամ այլ ակտերի վրա արած մակագրությունների ձևով . . .	1	
§ 22. Տուժանքների պայմանագրերը, որոնք կազմվում են ապահովելու համար սույն ցուցակի 15 և 16 պարագրաֆներում նշված պայ-		

Փաստաթղթերի անունը	Կամ-տուրք	համեմատական
մանագրերի կատարումը, առանձին ակտերի ձևով կամ այլ ակտերի վրա արած մակագրությունների ձևով.		
ա) պայմանագրերը կնքելիս . .	1	
բ) պայմանագրերն իրագործելիս	—	1
§ 23. Իրավունքներն ու պարտականությունները ուրիշին փոխանցելու փաստաթղթերն ըստ այն պայմանագրերի, որ նշված են սույն ցուցակի 15 և 16 պարագրաֆներում, թեկուզ և կազմվելու լինեն այդ պայմանագրերին վերաբերյալ փաստաթղթերի վրա արած մակագրության ձևով . .	—	3, բայց վոչ պակաս 4 կարգի հասարակ դրոշմատուրքից։
§ 24. Ապահովագրման պայմանագրերը (ապահովագրերը, վերակնքման վկայականները և այլն)	—	3, բայց վոչ պակաս 4 կարգի հասարակ դրոշմատուրքից։
§ 25. Կոոպերատիվ ապահովագրական կազմակերպությունների, որենքի ույժով, ռիսկների պարտադիր վերա-ապահովագրման պայմանագրերը	1	
§ 26. Բեռների յերկաթուղով և ջրային ճանապարհներով փոխադրության (բեռնագրեր, սերտեպարտիաներ, նավարեռնագրեր և նավագնացային ձեռնարկների անդորրագրեր) փաստաթղթերը . .	—	3, բայց վոչ պակաս 4 կարգի հասարակ դրոշմատուրքից։
§ 27. Յերկաթուղային բեռնագրերի կրկնակները, նավարեռնագրերի յերկրորդ և հետևյալ որինակները, իսկ սերտիպարտիաներ յեղած դեպքում՝ նավարեռնագրերի նաև առաջին որինակները	4	

Փաստաթղթերի անունը	Գումար	Համեմատական
§ 28. Հասարակ դրոշմատուրքի յենթակա փաստաթղթերի պատճենների և նրանց յերկրորդ ու հետևյալ որինակների, ինչպես նաև փաստաթղթերի ուրիշ լեզվով արած թարգմանությունների և այդ փաստաթղթերից հանած քաղվածքների համար վճարվում է դրոշմատուրք՝ բնագրներից վերցրած տուրքի չափով։ Համեմատական դրոշմատուրքի յենթակա փաստաթղթերի պատճենների և նրանց յերկրորդ ու հետևյալ որինակների, ինչպես նաև փաստաթղթերի ուրիշ լեզվով արած թարգմանությունների և այդ փաստաթղթերից հանած քաղվածքների համար վճարվում է բնագրերից գանձելիք տուրքի 0,1 չափով դրոշմատուրք, բայց վոչ պակաս 4 կարգի հասարակ դրոշմատուրքից և վոչ ավելի 25 ռուբլուց		
Ծանոթություն. — Դրոշմատուրք վճարելու յենթակա յեն միայն այն պատճեններն ու թարգմանությունները, վոր վավերացված են կառավարական հիմնարկի, կամ պաշտոնատար անձի կողմից և կամ այն կողմի միջոցով, վոր մասնակցել է փաստաթուղթը կազմելուն և պատճեն կամ թարգմանությունը տվել է մյուս կողմին։		

Փաստաթղթերի անունը	Գումար	Համեմատական
§ 29. Անորոշ գումարով պայմանագրերի պատճենների համար վճարվում է համեմատական այն դրոշմատուրքի 0,10, վոր բնագրից գանձվելու յե մինչև պատճեն հանած որը, բայց վոչ պակաս 1 կարգի հասարակ դրոշմատուրքից և վոչ ավելի 25 ռուբլուց։		

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ։

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝ Ռուդուտակ։

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղարի տեղակալ՝ ՊԱԽՈՄՈՎ։

Մոսկվա, Կրեմլ, 14 սեպտեմբերի 1927 թ.

Հավելված 2-րդ պետական դրոշմատուրքի կանոնադրության

Ց Ա Ն Կ

Պետական դրոշմատուրքի բացառությունների

ՄԱՍ. Ա

Այն հիմնարկները, ձեռնարկներն ու անձինք, որոնք ազատված են դրոշմատուրքից։

§ 1. — Կառավարական հիմնարկներն ու պաշտոնատար անձինք, յերբ վերջիններս կատարում են իրենց ծառայական պարտականությունները։

§ 2. — Պետական, այդ թվում նաև կոմունալ ձեռնարկները, որոնք պահվում են ընդհանուր պետական կամ տեղական միջոցներով՝ նախահաշվային կարգով։

§ 3. — ԽՍՀ Միության Պետական Բանկը։

§ 4. — Համամիութենական Կոմունիստական Կուսակցության (բ) և Յերիտասարդության Համամիութենական Լենինյան Կոմունիստական Միության կազմակերպությունները։

§ 5. — Արհեստակցական միությունները, նրանց որդաններն ու միացումները։

§ 6. — Փոխոգնության գյուղացիական ընկերություններն ու նրանց կոմիտեները, ինչպես և նրանց համապատասխան կազմակերպությունները (չքավոր շինականների կոմիտեները, «Կոշչի» միության կոմիտեները և այլն)։

§ 7. — Գյուղացու տները։

§ 8. — Գիտական ու կուլտուր-լուսավորական հիմնարկներն ու կազմակերպությունները։

§ 9. — Բարեգործական բնույթ ունեցող կազմակերպությունները, որոնք պաշտոնապես հաստատված կամ գրանցված են։

§ 10. — Հեղափոխության մարտիկների ոգնության միջազգային կազմակերպությունը (Մոպր)։

§ 11. — Միութենական հանրապետությունների Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունները։

§ 12. — Միջազգային կարմիր ստադիոնի կառուցողների ընկերությունը։

§ 13. — Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության մարմինների կողմից անմիջորեն շահագործվող (այդ թվում նաև նրանց կողմից վարձակալված)՝ ա) սանատորիները, բուժարանները, հանգրստյան տները, ինվալիդների հիմնարկները և այլ բուժական ու սանիտարա-առողջպահական հաստատությունները. բ) փոխադրական ձեռնարկները, որոնք սպասարկում են «ա» կետում մատնանշված հիմնարկներին ու հաստատություններին. գ) «ա» կետում մատնանշված հիմնարկների ու հաստատությունների մատակարարման առարկաներ պատրաստող ու արտադրող ձեռնարկները, որոնք բաց չեն թողնում այդ առարկաներն ազատ շուկա։

§ 14. — Պետական կուրորտներն ու կուրորտային տրեստները մինչև 1929 թ. ապրիլի 1-ը։

§ 15. — Վեներաբանական դիսպանսերների աշխատանքային պրոֆիլակտորիաներն ու նրանց կից գտնվող հան-

բակացարանները, արհեստանոցները, ճաշարաններն ու ակումբները։

§ 16. — Միութենական հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեներին ու տեղական գործադիր կոմիտեներին կից գտնվող և յերեխաների կյանքը բարվոքող հանձնաժողովները և նրանց պահած այն բոլոր ձեռնարկները, վորոնք ազատված են արհեստահարկից, ինչպես նաև խնամազուրկ յերեխաների ոգնության Վ. Ի. Լենինի անվան հասարակական ֆոնդի կազմակերպության և կարգադրության կենտրոնական Հանձնաժողովը, վորը գտնվում է ԽՍՀ Միության կենտգործկոմի նախագահության կից, նմանապես միութենական հանրապետությունների ԿԳԿ կից գտնվող Լենինի անվան ֆոնդի հանձնաժողովները։

§ 17. — Միութենական հանրապետությունների լուսավորության ժողովրդական կոմիսարիատների սոցիալական կրթության հիմնարկներին կից պահվող ոժանդակ արհեստանոցները, վորոնց սպասարկում են բացառապես այդ հիմնարկների սանները, և այդ արհեստանոցների բանվածքների վաճառման առևտրական ձեռնարկները։

§ 18. — «Ժողովրդական սնունդ» փայատիրական ընկերությունը, նրա բաժանմունքները, ճաշարանները և մասնավոր շուկայի վաճառահանության համար չնախահաշված ոժանդակ ձեռնարկներն ու նրա անմիջական հրամանատարության տակ գտնվող ճաշարանները, վոր կազմակերպում են բանվորների և ծառայողների կոոպերատիվները, բացառությամբ այն ճաշարանների, վորոնք դարեջրի վաճառք ունին։

§ 19. — Հրեական գաղութացման ընկերությունը («ԵԿՈ») և աշխատավոր հրեաների հողաշինարարության ընկերությունը («Ոզեռ»)։

§ 20. — Ուկրաինայի բաժնետիրական «Ուկրվոզդուխպուտ» ընկերությունը և կամավոր ոդային տորմիզի բաժնետիրական ընկերությունը։

§ 21. — Պաշտպանությանը և ոդագնացական ու քիմիական շինարարությանը նպաստող ընկերությունը («Ոսոավիախիմ»)։

§ 22. — Վոսկի փնտրող, հետախուզող և արդյունահանող վոսկե-արդյունաբերական ձեռնարկները։

§ 23. — Պետական այն ձեռնարկները, վորոնք վորոնում, հետախուզում, արդյունահանում և վերամշակում են ռադիոակտիվ հանքանյութերն ու ռադիումը։

§ 24. — Այն ձեռնարկները, վորոնց նպատակն է վորոնել, հետախուզել և արդյունահանել անագի, արճճի, նիկելի, ցինկի և ալյումինիոնի հանքանյութեր, ինչպես և նրանցից կոնցենտրատներ ու հալած մետաղներ ստանալ, վորոնք ազատված են դրոշմատուրքից Աշխատանքի և Պաշտպանության խորհրդի կողմից, ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1926 թ. ապրիլի 30-ի վորոշման կարգով, վորը վերաբերում է մասնավոր արդյունաբերության կողմից արճճի, ցինկի, անագի, նիկելի և ալյումինիոնի արդյունահանումն ուժեղացնելու միջոցներին („ԽՍՀ Միության Որենքների ժողովածու“ 1926 թ. № 35, հոդվ. 250)։

§ 25. — Գյուղատնտեսական վարկի բոլոր աստիճանի հիմնարկները, ինչպես և վարկա-կոոպերատիվային և արհեստա-կոոպերատիվային կազմակերպությունները։

§ 26. — „ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Իզվեստիայի“ հրատարակչությունը։

§ 27. — Սոցիալական ապահովության մարմինների կողմից կազմակերպվող՝ պատերազմի և աշխատանքի ինվալիդների սկզբնական միությունները։

§ 28. — Սոցիալական ապահովության մարմինների հաշվառքի մեջ գտնվող և միութենական հանրապետությունների՝ կույրերի ընկերությունների և խուլուհամբերի միությունների անդամ չեղող կույրերն և խուլուհամբերը, ինչպես նաև այդ ընկերություններն ու կույրերի և խուլուհամբերի այն բոլոր միությունները, որոնք գործում են սոցիալական ապահովության մարմինների հսկողության տակ։

Ծանոթություն. — Սույն ցանկի 27 և 28 պարագրաֆներում հիշատակված կազմակերպություններն ու անձինք դրոշմատուրք վճարում են ընդհանուր հիմունքներով, ըստ իրենց պատկանյալ առևտրական և արդյունաբերական ձեռնարկների։

§ 29. — Այն գործազուրկները, որոնք նպաստ են ստանում սոցիալական ապահովագրության գումարներից կամ որոնք ճանաչված են իբրև այդպիսի նպաստ ստանալու իրավունք ունեցող, ինչպես և նրանք, որոնք նպաստ են ստանում արհեստակցական միություններից, նմանապես և աշխատանքի բորսաներին կից կազմակերպված գործազուրկների կոլեկտիվները։

§ 30. — Այն անձինք, որոնք նպաստ են ստանում սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության կարգով։

§ 31. — Դպրոցական հաստատությունների աշակերտները, որոնք պետությունից թոշակ են ստանում։

§ 32. — Այն անձինք, որոնք դատարանի կողմից անկարող են ճանաչված վճարելու դատարանի կողմից քննվող գործի տուրքերը։

§ 33. — Այն ձեռնարկները, կազմակերպություններն ու անձինք, որոնք ԽՍՀ Միության կառավարության կողմից ազատված են դրոշմատուրքից՝ նրանց հետ կնքած պայմանագրերի համաձայն։

§ 34. — Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի այն կղզիների նստակյաց բնակչությունը, որոնք մատնանշված են այդ կղզիների կառավարչության կանոնադրության մեջ (ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1925 թ. հուլիսի 21-ի վորոշումը՝ Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի այն կղզիների բնակչության արտոնությունների մասին, որոնք գտնվում են Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի կղզիների գաղութացման ու արհեստային տնտեսությունների շահագործման վարչության իրավասության տակ („ԽՍՀ Միության որենքների ժող.“ 1925 թ. № 48. հոդվ. 357)։

§ 35. — Այն քաղաքացիները, որոնք պատկանում են ԽՍՀ Միության ծայրագավառներում բնակվող ցեղերին, որ հիշատակված են ԽՍՀ Միության Հյուսիսային ծայրագավառներում բնակվող ցեղերի հարկային արտոնությունների մասին ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1925 թ. հոկտեմբերի 16-ի վորոշման մեջ („ԽՍՀ Միության որ. ժող.“ 1925 թ. № 74, հոդվ. 543, և 1927 թ., № 48, հոդվ. 485), բացի այն անձնավորություններից, որոնք, որպես արհեստ, իրենց հաշվով գնում — մթերում են տեղական արտադրանքները վերավաճառքի համար։

ՄԱՍ 2

Այն փաստաթղթերը, որոնք յենթակա չեն դրոշմատուրքի վճարման։

1. Ընդհանուր բնույթի փաստաթղթեր

§ 36. — Պետական հիմնարկներին ու պաշտոնատար անձանց ուղղված դիմումները, յեթե դրանք պարտադիր են։

§ 37. — Պետական հիմնարկներին ու պաշտոնատար անձանց ուղղված դիմումները՝ հանուն պետական և հասարակական շահերի, ինչպես նաև պետական ձեռնարկների դիմումները, ուղղված իրենց կառավարող պետական հիմնարկներին։

§ 38. — Այն դիմումները, վորոնք ուղղված են ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին և նրա նախագահությանը, միութենական հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեներին և կենտրոնական գործադիր կոմիտեների նախագահություններին, ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին և Աշխատանքի ու Պաշտպանության խորհուրդին ու միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին և անտեսական խորհրդակցություններին, ինչպես նաև այդ դիմումների պատասխանները։

§ 39. — Կառավարական հիմնարկների և պաշտոնատար անձանց պատասխանները՝ դրոշմատուրքից ազատ ու իրենց ուղղված դիմումներին (հայտարարություններ, միջնորդություններ, գանգատներ և ուրիշներ)։

§ 40. — Կառավարական հիմնարկներին ու պաշտոնատար անձանց ուղղված դիմումները դրոշմատուրքից ազատ փաստաթղթեր տալու վերաբերմամբ։

§ 41. — Դրոշմատուրքից ազատված փաստաթղթերի պատճեններն ու կրկնակները, ուր ուզում է նրանք ներկայացվելիս լինեն, բացառությամբ արհեստային ու ակցիզային պատենտների և տոմսերի պատճենների (պար. 100)։

§ 42. — Այն փաստաթղթերը, վորոնք վերաբերում են քաղաքացիների քաղաքական իրավունքների գործերին և խորհրդային, հասարակական, դրանց թվում նաև կոոպերատիվային ու արհեստակցական կազմակերպությունների ընկերություններին։

§ 43. — Աշխատանքի պաշտպանության գործերով աշխատավորների դիմումները պետական հիմնարկներին ու պաշտոնատար անձանց։

§ 44. — Վարչական կարգով սահմանված դրամական գանձումների գործերով կատարված դիմումները, յերբ վերադրված գանձման գումարը չի անցնում 25 ռուբլուց, և այն դիմումները, վորոնք վերաբերում են գյուղատնտեսական միասնական հարկի գանձումների բոլոր գործերին։

§ 45. — Պաշտոնատար անձանց չարաշահությունների և ապօրինի գործողությունների համար արված գանգատները և ԲԳՏ գանգատների բյուրոյի ամբողջ գործավարությունը։

§ 46. — Կառավարական հիմնարկներին ու պաշտոնատար անձանց ուղղված դիմումները, վորոնք ստացվում են արտասահմանում ապրող ռուս քաղաքացիներից։

§ 47. — Գույքերի գրավման ու կոնֆիսկացիայի գործերով արված դիմումներն ու գանգատները։

§ 48. — Այն դիմումները, վորոնք տրվում են վիճակային, ռայոնական և նրանց համապատասխան գործադիր կոմիտեներին ու գյուղական խորհուրդներին, և այդ հիմնարկների կողմից տրված փաստաթղթերը, բացի ա) առևտրական ու արդյունաբերական ձեռնարկներին վերաբերող փաստաթղթերից, և բ) քաղաքացիական վիճակի ակտերի և քաղվածքների գրքերից քաղվածքներ տալու մասին կատարված դիմումներից։

§ 49. — Հյուպատոսական տուրքի տակ դրված փաստաթղթերը։

§ 50. — ԽՍՀ Միության լիազոր ներկայացուցչություններին (դիպլոմատներին) ու միսիաներին ուղղված դիմումները։

§ 51. — ԽՍՀ Միության մեջ գտնվող ռուսերկրյա դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցիչների՝ Միության և միութենական հանրապետությունների կառավարական հիմնարկների ու պաշտոնատար անձանց հետ ունեցած գրագրությունը։

§ 52. — Անձնավորության ամեն տեսակի հավաստագիրները և հասցեատերերի տեղեկանքները։

§ 53. — Զինապարտության գործերին վերաբերող փաստաթղթերը։

§ 54. — Այն փոխանորդագրերը, որոնք տրված են՝ ա) դրոշմատուրքից ազատ գործերի համար. բ) դրոշմատուրքից ազատ հիմնարկներից ու անձնավորություններից. գ) աշխատավարձ, կենսաթոշակ և այլ վճարումներ ստանալու համար. դ) փոստ-հեռագրական առաքումներ ստանալու համար. ե) ռուսերկրյա ապահովագրական ընկերություններից ապահովագրական գումարներ ստանալու գործերով տրված փոխանորդագրերն ու փոխանորդության փոխանցումները. զ) դրամ, ապրանքներ և այլ արժեքներ ստանալու համար միանգամվա համար տրված լիազորագրերը։

§ 55.—Բացի վորսորդականից՝ մնացած տեսակի զենք ձեռք բերելու, պահելու և կրելու իրավունքի համար տրված հավաստագրերն այն անձանց, վորոնք վորսորդական կոոպերատիվների անդամներ չեն։

§ 56. — Վորսորդական վկայականներն ու վորսորդական զենքի տոմարագրման փաստաթղթերը։

2. Դատական ու նոտարական գործերի փաստաթղթեր

§ 57. — Քրեական գործերի փաստաթղթերը։

§ 58. — Այն փաստաթղթերը, վորոնք տրված են աշխատավարձի, խեղանդամության համար ապրուստի միջոցների և վարձատրության դատական դանձումների համար, ինչպես և այն փաստաթղթերը, վորոնք տրված են 25 ռուբլուց չգերազանցող հայցերի համար։

§ 59. — Գումարները դեպոզիտ մտցնելու, ինչպես և այդ գումարները վճարելու և վերադարձնելու համար դատական ու նոտարական հիմնարկներին տրված հայտարարությունները։

§ 60. — Այն թղթերի ու փաստերի պատճենները, վորոնք ներկայացվում են դատական հիմնարկներին դատավարության մեջ մասնակցող այլ անձանց հաղորդելու համար։

§ 61. — Վկաների ու փորձագետների դիմումները՝ ուղղված դատական հիմնարկներին։

§ 62. — Նոտարական գործողություններ կատարելու մասին նոտարական գրասենյակներին ու նրանց փոխարինող մարմիններին տրված դիմումները։

3. Խնամակալության, սոցիալական ապահովագրության յեվ սոցիալական ապահովության գործերի փաստաթղթեր

§ 63. Այն փաստաթղթերը, վորոնք վերաբերում են անչափահասների խնամակալության, վորդեգրության և սոցիալ-իրավական պաշտպանության գործերին։

§ 64. — Այն փաստաթղթերը, վորոնք վերաբերում են սոցիալական ապահովության, դրա թվում նաև սոցիալական ապահովագրության կարգով յեղող ապահովագրության գործերին։

§ 65. — Սոցիալական ապահովագրության մուծումները ներելու, հետաձգելու և մասնատելու համար տրված միջնորդությունները, յեթե այն գումարը, վորի համար միջնորդություն է հարուցված, 50 ռուբլուց չի անցնում։

4. Կուլտ-լուսավորական գործերի փաստաթղթերը

§ 66. — Լուսավորության գործի փաստաթղթերը (բացառությամբ տնտեսական գործերի), այդ թվում նաև ամեն տեսակի այն փաստաթղթերը, որոնք տրվում են դպրոցական հաստատությունների կողմից նրանց մեջ յեղող ուսուցիչներին ու աշակերտներին։

§ 67. — Պետական հիմնարկներին ու պաշտոնատար անձանց ուղղված այն դիմումները, որոնք վերաբերում են գիտության, գեղարվեստի և տեխնիկայի բնագավառում կատարվող հետազոտությունների ու հայտնագործումների հարցերին։

§ 68. — Գիտական հիմնարկներին ուղղված դիմումները։

5. Այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են գյուղական բնակչության, գյուղական տնտեսության յեվ նրա արտադրանքների իրացման գործերին

§ 69. — Կառավարական հիմնարկներին և պաշտոնատար անձանց ուղղված դիմումներն այնպիսի գործերի վերաբերյալ, որոնք կապ ունին՝ ա) գյուղական տնտեսության հատուկ ճյուղերի զարգացման հետ. — յերաշտի դիմացող, տեխնիկական, դեղաբույսերի և այլ հատուկ մշակույթների, ինչպես և այգեգործության, բանջարաբուծության, խաղողաբուծության, մեղվաբուծության, մետաքսագործության, թռչնաբուծության, անասնապահության և այլ ճյուղերի մշակումը. բ) գյուղատնտեսական բարելավումների հետ. գ) ձկնաբուծության կազմակերպության ու բարելավման հետ։

§ 70. — Այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են հողի աշխատավորական ոգտագործման (անտառների

ոգտագործման) և նրա հետ կապ ունեցող հողաշինարարության գործերին, ինչպես և ներս-գաղթողներին ու վերադարձած վտարանդիներին պետական հիմնարկների կողմից տրված հողամասերին ու արդյունաբերական ձեռնարկներին վերաբերող փաստաթղթերը։

§ 71. — Կառավարական հիմնարկներին ու պաշտոնատար անձանց ուղղված դիմումները, որոնք վերաբերում են ձկնորսական վայրերի աշխատավորական ոգտագործման և կենդանաբուծական տնտեսության մուծման հետ կապված գործերին։

§ 72. — Գաղթեցնելու և զանազան տեղեր բնակեցնելու գործերի փաստաթղթերը։

§ 73. — Այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են աշխատավորական գյուղացիական յերկրագործական տնտեսությունների ընդհանուր ոգտագործման գույքի բաժանմանը, այդ տնտեսությունների մեջ նոր անդամներ ընդունելուն, ինչպես նաև հողային ընկերությունների մեջ մտնելուն և նրանցից դուրս գալուն։

§ 74. — Այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են դաշնակից հանրապետությունների հողագործության ժողովրդական կոմիսարիատների մարմինների կողմից խորհրդային ու գյուղացիական գյուղական տնտեսություններին և գյուղատնտեսական արտելներին ու կոմունալ կոոպերատիվային ընկերություններին ժամանակավոր ոգտագործման համար տոհմիկ անասուններ անվճար բաց թողնելուն։

§ 75. — Այն փաստաթղթերը, որոնք տալիս են դաշնակից հանրապետությունների հողագործության ժողովրդական կոմիսարիատների մարմինները հողի աշխատավորական ոգտագործողներին ու նրանց համախմբումներին, և որոնք վերաբերում են ոգտագործման համար տեղական նշանակություն ունեցող անտառներ, այրված

անտառահողեր, կոբելի անտառամասեր, անտառային բացատներ և այլ մասեր նրանց տալուն։

§ 76. — Այն փաստաթղթերը, վորոնք վերաբերում են աշխատավոր բնակչությանը ձրի և արտոնյալ անտառանյութեր բաց թողնելուն և նրան, ձրի կամ արտոնյալ կերպով, անտառային կողմնակի ոգտագործումներ, ինչպես և կոճղերը անվճար արմատախիլ անելը թույլ տալուն։

§ 77. — Անտառահատման այն տոմսերը կամ որդերներն ու այլ փաստաթղթերը, վորոնք վերաբերում են դաշնակից հանրապետությունների հողագործության ժողովրդական կոմիսարիատների մարմինների կողմից բանվորներին, ծառայողներին և հողի աշխատավորական ոգտագործողներին 50 ռուբլուց վոչ-ավել գումարի անտառանյութեր բաց թողնելուն։

§ 78. — Կառավարական հրամանագրերին ու պաշտոնատար անձանց ուղղված այն դիմումները, վորոնք վերաբերում են գյուղական տնտեսության ու գյուղական հողամասերի բաբելավման և զարգացման գործերին։

§ 79. — Անասնաբուծական այն վկայականները, վորոնք տրվում են գյուղական տնտեսություններին՝ անասունները և այդ տնտեսությունների հում կենդանական արտադրանքները դուրս տանելու իրավունքի համար։

§ 80. — Սերմացվի վորակի մասին տրվող այն հավաստագրերը, վոր տալիս են դաշնակից հանրապետությունների հողագործության ժողովրդական կոմիսարիատների սերմա-կոնտրոլային կայանները և հողժողկոմատների տեղական որգանները։

§ 81. — Պետական տեսչության կողմից տրվող հավաստագրերը, վորոնց համաձայն՝ պետք է տեսչական այցի յենթարկել հացամթերքներն ու յուղամթերքները։

§ 82. — Բանվորների, ծառայողների և հողի աշխատավորական ոգտագործողների միջնորդությունները, վորոնք վերաբերում են գյուղական վայրերում նոր շինություններ կառուցելու, վերաշինություններ անելու կամ հները քանդելու թույլտվությանը, բացառությամբ առևտրա-արդյունաբերական բնույթ կրող շինությունների։

§ 83. — Գույքի վարձույթի գործարքին վերաբերող այն փաստաթղթերը, վորոնք կնքվում են գյուղական տընտեսությունը, գյուղատնտեսական արդյունաբերությունը, տնայնագործական արդյունաբերությունը գյուղական վայրերում ելեքտրիֆիկացիայի յենթարկելու և գյուղական բնակչության կուլտուրական կարիքներին գոհացնում տալու նպատակով։

§ 84. — Այն փաստաթղթերը, վորոնք կապ ունեն հրեական գաղութացման ընկերության («ԵԿՈ») և աշխատավոր հրեաների հողաշինարարության ընկերության («ՈԳԵՏ») արհեստահարկից ազատված ձեռնարկների գործունեության հետ, ինչպես նաև այն փաստաթղթերը, վորոնք վերաբերում են ԽՍՀ Միության կառավարության և նրանց միջև կնքված պայմանագրերում մատնանշված նպատակների իրագործման համար գույքեր ձեռք բերելուն, գույքերի ոտարմանը, դրանց վարձակալությանն ու գրավ դնելուն։

6. Արդյունաբերության յեվ տրեվստրի գործերին վերաբերյալ փաստաթղթեր

§ 85. — Սինդիկատների փայերը և նրանց կապիտալների մեջ մուծումների ընդունումը հավաստիացնող փաստաթղթերը։

§ 86. — Վոսկի պարունակող հողամասերի գրավման թույլտվությունը՝ մշակության համար։

§ 87. — Այն եքսպոնատների համար տրված դիպլոմներն ու պարգևաթղթերը, վորոնք մրցանակի յեն ար-

ժանանում՝ ինչպես արդյունաբերական, այնպես և գյուղատնտեսական ցուցահանդեսներում։

§ 88. — Գյուտերի պատենտները արդյունաբերության բնագավառում և նրանց ստացման վերաբերյալ գրագրությունները։

§ 89. — Այն գործարքների փաստաթղթերը, որոնք վերաբերում են՝ ա) ապրանքների արտահանությանը Մանջուրիայից և ապրանքների ներմուծմանը Մանջուրիա՝ Վլադիվոստոկի նավահանգստի տրանզիտային մասի միջոցով և բ) «ա» կետում մատնանշված արտահանության ու ներմուծման հետ կապված փոխադրական, հանձնակատարական ու վարկային գործունեություններին։

§ 90. — Տեխնիկական և տնտեսական կարիքների համար դենատուրատ սպիրտ բաց թողնելու հավաստագրերն ու այլ փաստաթղթերը։

7. Կոոպերատիվների յեվ կամավոր ընկերությունների գործերի փաստաթղթերը

§ 91. — Կոոպերատիվային կազմակերպությունների տոմարագրման հայտարարությունները։

§ 92. — Սպառողական ընկերությունների փայատերերի անդամակցական գրքույկների կորստյան մասին միլիցիայի արձանագրությունների պատճենները։

§ 93. — Կոոպերատիվային կազմակերպությունների փայերն և ամեն տեսակի այն փաստաթղթերը, որոնք հավաստացնում են մուծումների ընդունումը նրանց կազմակերպությունների դրամագլուխների մեջ։

§ 94. — Բանվորների ու ծառայողների համար բնակարանների շինության, վերականգման և հիմնական վերանորոգության կարիքների համար կնքվող գործարքների փաստաթղթերը՝ ա) բնակարանա-վարձակալական և բանվորական բնակարանա-շինարարական կոոպերատիվային ընկերությունների կողմից. բ) բոլոր աստիճանի բնակարանային կոոպերացիայի միությունների կողմից. գ) պետական հիմնարկների ու ձեռնարկների կողմից. դ) բաժնետիրական ընկերությունների կողմից, որոնց ակցիաների (փայերի) մեծամասնությունը փաստորեն պատկանում է պետական հիմնարկներին ու ձեռնարկներին։

§ 95. — Շինարարության կարիքների համար արտոնյալ փոխակրության հավաստագրեր տալու մասին բանվորական բնակարանային շինարարական կոոպերատիվների դիմումները ու տրվող հավաստագրերը։

§ 96. — Կամավոր հրդեհաշիջային ընկերությունների և դրուժինաների, ինչպես և ջրերում խեղդվողներին փրկող ընկերությունների կազմակերպության ու տոմարագրական փաստաթղթերը։

8. Ֆինանսական ու վարկային գործերին վերաբերյալ փաստաթղթերը

§ 97. — Գանգատներն ու միջնորդությունները՝ նրանց ներկայացնելու ժամկետը վերականգնելու մասին՝ 1) միասնական գյուղատնտեսական հարկի համար, ուր ուզում է նրանք ներկայացվելիս լինեն. 2) մնացած հարկերի և տուրքերի համար, յեթե գանձման գումարը, որի համար գանգատ է տրվում, 25 ռուբլուց ավելի չէ։

§ 98. — Հարկերը և տուրքերը գիջելու, հետաձգելու և վճարումը մասնատելու մասին տրվող միջնորդությունները, յեթե այդպիսիների գումարը 25 ռուբլուց չի անցնում, և միասնական գյուղատնտեսական հարկին վերաբերյալ ամեն տեսակի միջնորդությունները։

§ 99. — Միջնորդությունները՝ ավելորդ մուծված պետական և տեղական հարկերն ու տուրքերը վերադարձ-

նելու և կամ նրանք այլ հարկերի ու տուրքերի հաշվին հաշվակցելու մասին

§ 100. — Արհեստային ու ակցիզային պատենտներն ու տոմսերը (բայց վոչ նրանց պատճենները)։

§ 101. — Պետական փոխառությունների պարտատոմսերը, այդպիսի փոխառությունների բաժանորդագրության և նրա շահումների ստացման հետ կապված փաստաթղթերը, ինչպես և այդ փոխառությունների պարտատոմսերի գործարքներին վերաբերյալ փաստաթղթերը։

§ 102. — Ակցիաներն (փայերն) ու պարտատոմսերը, վորոնք տրվում են մաշվածների ու վնասվածների փոխարեն։

§ 103. — Մաշված, վնասված և հին տեսակի դրամանիշները նորերով փոխանակելու համար տրվող միջնորդությունները։

§ 104. — Կարիքավոր բնակչության համար պետական միջոցներից սերմացվի և այլ փոխատվությունների բաշխման փաստաթղթերը։

§ 105. — Փոխադրական մուրհակների որինակները, վորոնք ուղարկվում են միայն ակցեպտացիայի համար։

§ 106. - Ներս գաղթածների դիմումները, վորոնք վերաբերում են նրանց կողմից Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության հյուպատոսանները և կամ վարչային հիմնարկները մուծած ոտար վալյուտայի համարժեքը վճարելուն։

§ 107. — Պետական աշխատավորական խնայողական դանձարկղներին տրված դիմումները։

§ 108. — Ֆինժողկոմատի դանձարկղներին տրված հայտարարությունները, դիպոզիտների, հարկերի ու տուրքերի, տուգանքների ու տույժերի և այլ տեսակի մուծումների մասին։

§ 109. — ԽՍՀ Միության Պետական Բանկի կողմից տրվող տեղեկանքները վարկունակության մասին։

9. Ապահովագրական գործերին վերաբերյալ փաստաթղթեր

§ 110. — Այն փաստաթղթերը, վորոնք վերաբերում են՝ ա) պարտադիր կոլարային ապահովագրությանը. բ) գյուղական վայրերի շինությունների պետական լրացուցիչ կոլարային ապահովագրությանը կրակից. գ) աշխատավորական յերկրագործական բնակչությանը պատկանող տնային իրերի և գյուղատնտեսական արտադրանքների հասարակ ապահովագրությանը կրակից. և դ) գյուղատնտեսական բուսական մշակույթների ամեն տեսակի ապահովագրություններին՝ կարկտահարությունից, և գյուղատնտեսական անասուններինը՝ համաճարակից։

§ 111. — Կոոպերատիվային ապահովագրական կազմակերպություններում կատարվող ապահովագրության փաստաթղթերը։

10. Փոխադրության յեվ կապի գործերին վերաբերյալ փաստաթղթեր

§ 112. — Մարդատար տոմսով փոխակրվող բագաժն ընդունվելու անդորրագրերը։

§ 113. — Փոստ-հեռագրական գերատեսչության կենտրոնական վարչություններին ու տեղական հիմնարկներին ուղղված դիմումները, վորոնք վերաբերում են փոստ-հեռագրական թղթակցություններին և հեռախոսով խոսակցություններին (բացի առաքված հեռագրների վավերացված պատճենները տալու մասին տրված հայտարարություններից)։

§ 114. — Յերկաթյուղիներով այն ծառայական բեռների փոխակրության փաստաթղթերը, վորոնք նախատեսված են հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատի մարմինների համար։

§ 115. — Փոստ-հեռագրական հիմնարկներին ուղղված հայտարարությունները, վորոնք վերաբերում են՝ ա) հեռախոսով հերագրներ տալու և բ) հեռագրներին հետևող վճարները կատարելու իրավունք ստանալուն։

§ 116. — Զինվորական պաշտոնյաների, բանվորների, ծառայողների և քաղաքից դուրս գտնվող շեներում ապրող քաղաքացիների հայտարարությունները, վորոնք տրվում են փոստ-հեռագրական հիմնարկներին՝ ընդունող ռադիո-կայաններ սարքելու թույլտվության համար։

11. Մաքսատնային գործերին վերաբերյալ փաստաթղթեր

§ 117. — Մաքսատնային վկայականներն այն ապրանքների համար, վորոնք բերվում են մանր հակերով տեղական գործածության համար։

§ 118. — Ոտար միսիաների բեռները մաքսատնային հիմնարկներից առանց մաքս վճարելու բաց թողնելու թույլտվությունը։

§ 119. — Մաքսատների թույլտվությունը, վորպիսի պարեն անցկացվի նավի վրա նավի ծառայողների պեռքերի բավարարության համար։

§ 120. — Դեպի Խորհրդային Միությունն եկող քաղաքական տարագիրների կողմից մաքսատներին տրված հայտարարությունները վորոնք վերաբերում են արտասահմանից ժամանող նրանց գույքի անմաքս անցկացնելուն։

§ 121. — Փոստին ներկայացնելու համար մաքսատնային հիմնարկների կողմից տրված հավաստագրերը՝

գնելու փոստային այն ծանրոցները, վորոնք արտոնյալ պայմաններով ուղարկվում են կարմիր բանվորուհիներին կամ ուղարկվում են վերջիններիս կողմից՝ $7^1/_2$ կիլոմետրանոց ցամաքային սահմանամերձ շերտից։

12. Բանվորների ու ծառայողների գործերին վերաբերյալ փաստաթղթերը

§ 122. — Վկայականները, հավաստագրերն ու այլ փաստաթղթերը, վորոնք տրվում են բանվորներին ու ծառայողներին՝ նրանց ծառայության անցնելու առթիվ, ինչպես և հավաստագրերը նրանց ընտանեկան դրության և այն անձնավորությունների մասին, վորոնք նրանց ծախսով են ապրում։

§ 123. — Կոմունալ մարմիններին կամ պետական հիմնարկներին պատկանող տների վարչությանը բանվորների ու ծառայողների կողմից տրված հայտարարությունները՝ նրանց բնակարաններ տալու, վերանորոգություն կատարելու, նրանց հատկացված բնակարանները լուսավորելու և տաքացնելու և այլ կոմունալ սպասարկություն անելու մասին։

Ծանոթություն. — Այս ցանկի պարագրաֆներով բանվորներին ու ծառայողներին տրվող արտոնությունները տարածվում են նաև այն բանվորների ու ծառայողների վրա, վորոնք ժամանակավորապես մնում են անգործ։

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ։

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի փոխարեն՝ ՑԱ. ՌՈՒԶՈՒՏԱԿ։

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղարի տեղակալ՝ ՊԱԽՈՄՈՎ։

Մոսկվա, Կրեմլ, 14 սեպտեմբերի 1927 թ.

Խ.Ս.Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՎՈՐՈՇՈՒՄԸ:

Արժեքների շրջանառությունից գանձվող հարկի կանոնադրությունը

1. Արժեքների շրջանառությունից գանձվող հարկին յենթարկվում են բոլոր առևտրական և արդյունաբերական ձեռնարկները, որոնք յենթարկվում են հավասարարար տուրքի, բացի այն բացառություններից, որ մատնանշված են սույն կանոնադրության 2-րդ հոդվածում։

Ծանոթություն. — Այն հիմնարկները, որոնց վերաբերմամբ հավասարար տուրքի փոխարեն սահմանված է պետական տուրքի վճարում կրկնակի չափով, ազատ են արժեքների շրջանառությունից գանձվող հարկից։

2. Արժեքների շրջանառությունից գանձվող հարկից ազատվում են՝ ա) ամեն աստիճանի արհեստային կոոպերատիվ կազմակերպությունները. բ) պետական և կոոպերատիվային կազմակերպությունների գործառնությունները, որոնք վերաբերում են անհասույթաբեր ապրանքների արտասահման արտահանելուն և գ) պետական ձեռնարկների գործառնությունները, որոնք վերաբերում են բանվորա-գյուղացիական կարմիր բանակի ամեն տեսակի մատակարարության առարկաների արտադրությանը։

3. Արժեքների շրջանառությունից գանձվող հարկը հաշվվում է ըստ տարեկան շրջանառության, իսկ համապատասխան դեպքերում՝ ըստ հարկային շրջանին նախորդող կիսամյա ժամանակաշրջանի շրջանառության։

Ծանոթություն.—Նոր առաջացած ձեռնարկների վերաբերմամբ, որոնք հավասարար տուրքի յենթարկվում ընդհանուր կարգով, արժեքների շրջանառությունից գանձվող հարկը հաշվվում է ըստ յենթադրական շրջանառության, պայմանով, որ տարին վերջանայուց հետո վերահաշվում կատարվի՝ համաձայն իրական շրջանառության։

4. Արժեքների շրջանառությունից ստացվող հարկը գանձվում է շրջանառության 0,55 տոկոսի չափով բոլոր ձեռնարկներից (հոդվ. 1), բացառությամբ սույն կանոնադրության 5 և 6 հոդվածներում մատնանշվածների։

5. Արժեքների շրջանառությունից ստացվող հարկը գանձվում է շրջանառության 0,3 տոկոսի չափով՝ ա) պետական գետային նավագնացությունից և «Կասպիսկոյե պարախոդստվո» բաժնետիրական ընկերությունից, պետական ձեռնարկներից, որոնք արտադրում ու վաճառում են հանքանյութեր, քարածուխ, նավթ, մետաղներ ու ելեքտրատեխնիկայի իրեր. բ) առևտրական ձեռնարկներից, որոնք առավելապես մանրածախս առևտուր են անում, և գ) արդյունաբերական ձեռնարկներից, որոնք առաջին յերեք կարգի պատենտներ են վերցնում։

6. Արժեքների շրջանառությունից վերցնելիք հարկը գանձվում է կոոպերատիվային կազմակերպությունների մանրածախս գործառնությունների շրջանառություններից — 0,2 տոկոսի չափով, մեծաքանակ գործառնություններից՝ 0,3 տոկոսի, իսկ սինդիկատների շրջանառությունից՝ 1 տոկոսի չափով։

7. Արժեքների շրջանառությունից ստացվող հարկը գանձելիս՝ նրանց շրջանառությունն է համարվում. ա) ապ-

բանքա-առևտրական ձեռնարկների, այդ թվում նաև ամեն աստիճանի կոոպերատիվային կազմակերպությունների համար — ապրանքների կանխիկ և ապառիկ վաճառումից ստացված ընդհանուր գումարը, բացառությամբ առանձին հարկի տակ դրված կապալներից ու մատակարարումներից ստացվող գումարների, սակայն հաշվելով տոնավաճառային առևտրի շրջանառությունները, ըստ վորում, նույն ապրանքատիրոջ մեկ առևտրական ձեռնարկից մյուս առևտրական ձեռնարկին հանձնվող ապրանքների արժեքը չի մտնում շրջանառության գումարի մեջ. բ) հում նյութերի արդյունահանությամբ կամ իր սեփական նյութերից ստացվող բանվածքների արտադրությամբ զբաղվող արդյունաբերական ձեռնարկների համար — վաճառված հում նյութերի բանվածքների վաճառքի արժեքը, ըստ վորում, միևնույն ապրանքատիրոջ մի այլ ձեռնարկին հանձնվող ապրանքների արժեքը չի մտցվում շրջանառության մեջ. գ) ուրիշի նյութերի աշխատանքով զբաղված արդյունաբերական ձեռնարկների համար — ընդհանուր դասածը, առանց հաշվելու ուրիշի նյութի արժեքը. դ) փոխադրության, փոխակրության ձեռնարկների, աշխատավորական արտելների և բոլոր անապրանք առևտրական ձեռնարկների համար — ընդհանուր յեկամտի գումարը. ե) միջնորդ, հանձնակատարական և առաքողական ձեռնարկների ու գործառնությունների համար — վարձատրության գումարը. զ) վարկային հիմնարկների համար — հոգուտ հիմնարկների հաշված տոկոսների, կոմիսիայի, վարձի և այլ ընդհանուր վաստակների գումարը, իսկ իր հաշվին կատարվող ապրանքա-առևտրական գործառնությունների դեպքում — կանխիկ ստացած և ապառիկ ընդհանուր գումարը. ը) մենավարձի (откуп) համար — մենավարձողի ըստ մեծավարձի կատարած գործառնություններից ստացած գումարը. թ) մի տարուց ավելի տևող կապալների ու մատակարարումների

համար — այն գումարը, վորի չափով այդ կապալներն ու մատակարարումները կատարված են յեղել նախընթաց տարում, իսկ այլ կապալների ու մատակարարումների համար - կատարածի գումարը. ժ) կենտրոնացման կարգով հավասարար տուրքի տակ դրված ձեռնարկների համար (պետական արհեստահարկի 1926 թ. սեպտեմբերի 24-ի կանոնադր. 26-երորդ հոդվ. — «ԽՍՀ Միության որ. ժ.» 1926 թ. № 63, հոդվ. 474) — ինչպես վարչության, այնպես և ձեռնարկին պատկանող առևտրական ու արդյունաբերական հաստատությունների շրջանառությունների այն ընդհանուր գումարը, վորն ստացվում է սեփական արդյունաբերության և այլ ապրանքների իրացումից ու, ինչպես ազատ, այնպես նաև հաստատուն գներով սպասարկումներ կատարելուց, թե կանխիկ և թե ապառիկ։ Արժեքների տեղաշարժումները ձեռնարկի ներսում՝ ինչպես ձեռնարկի վարչության և նրա հաստատությունների միջև, այնպես և առհասարակ հաստատությունների միջև, այդ թվում և պատրաստի արտադրանքի հանձնումը հաստատությունների սեփական կարիքների համար, — չի մտնում հարկի տակ դրվող շրջանառության մեջ։ Սինդիկատի կողմից՝ իր ֆունկցիաների իրագործման կարգով՝ իր անդամների արտադրանքն իրացնելու, համաձայն կանոնադրության, սինդիկատի հարկի տակ դրվող շրջանառությանը վերաբերում է միայն այն վրադրումը, վոր սինդիկատն ավելացնում է արտաքին իրացման ժամանակ անդամներին վճարված գումարներին, անկախ անդամի հետ սինդիկատի ունեցած գործարքի ձևից և նրանց միջև տեղի ունեցող հաշվետեսության պայմաններից։

Մահոբություն. — Ցենթակցիզային առարկաներ արտադրող կամ նրանցով առևտուր անող և ակցիզն անմիջականորեն գանձարանին վճարող ձեռնարկների (հաստատությունների) շրջանառությունները հաշվելիս, այդ շրջանառությունն-

ներից հանվում է ակցիզի գումարը, որ վճարել են նրանք անցած հարկային ժամանակամիջոցում։

Անցած հարկային ժամանակամիջոցում մաքսեր վճարած ձեռնարկների (հաստատությունների) շրջանառությունները հաշվելիս, այդ մաքսերի գումարը հանվում է շրջանառության գումարից։

8. Արժեքների շրջանառությունից գանձվող հարկերի կոպարները, հարկային ժամանակամիջոցի ընթացքում փակված ձեռնարկների (հաստատությունների) համար, իջեցվում են հարկային ժամանակամիջոցի՝ մինչև պատենտի ներգործության ժամկետը մնացած մասի համեմատությամբ։

Ծանոթություն. — Սույն հոդվածի կանոնը չի տարածվում այն առանձին հաստատությունների վրա, որոնք մտնում են կենտրոնացման կարգով հավասարար տուրքի տակ գրվող ձեռնարկների կազմի մեջ։

9. Արժեքների շրջանառությունից գանձվող հարկերի վճարումը կատարվում է այն կարգով և այն ժամկետներին, որոնք սահմանվում են ԽՍՀ Միության ֆինանսների ժողովրդական կոմիսարիատների կողմից։

10. Ներկա կանոնադրությունը կիրառելու հրահանգը հրատարակում է ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը, համաձայնության գալով ԽՍՀ Միության Ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի և ԽՍՀ Միության արտաքին ու ներքին առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի հետ։

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ։

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝ ՅԱ. ՌՈՒԶՈՒՏԱԿ։

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի քարտուղարի տեղակալ՝ ՊԱԽՈՒՄՈՎ։

Մոսկվա, Կրեմլ. 14 սեպտեմբերի 1927 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0210362